

5615

Խ. Ս. Շ.

ՆԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Handwritten notes in Armenian script, possibly a signature or title.

ԱՆՈՒՇ

ՈՊԵՐԱ ԼԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄ
ՅԵՎ, ՅՈՐ ԳԱՏԿԵՐՈՎ

ԼԻՐՈՅՑՏՈ

յեվ

ՆՐԱԳԻՐ

Faint purple circular stamp with Armenian text, likely a library or archival mark.

ՅԵՐԵՎԱՆ

1986

25 OCT 2010 PH
34465

182
0-57



Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ

2 6 003 2014

5675

36061-62



Հ. Խ. Ս. Հ.

ՈՊԵՐԱՅԻ ՅԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ա Ն Ո Ւ Շ

ՈՊԵՐԱ ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ
ՅԵՎ ՅՈԹ ՊԱՏԿԵՐՈՎ

ԸՍՏ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻԶ
ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 3 6

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

(Կենսագրական գծեր)

Արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը ծնվել է 1880 թվին, Ալեքսանդրապոլ քաղաքում:

«Հայկական ոպերայի միտքը,—գրում է Արմեն Տիգրանյանը,—ինձ սկսեց դառնալ հենց այն ընկերից, յերբ առաջին անգամ սկսեցի հաճախել Թբիլիսիի ոպերային ներկայացումները»:

1908 թվին առաջին անգամ ծանոթանալով Հովհաննես Թումանյանի «ԱՆՈՒՇ» պոեմի հետ, Արմեն Տիգրանյանը վորոշում է այն վերածել ոպերայի:

«Անուշ»-ն ամբողջությամբ առաջին անգամ բեմադրվում է 1912 թվին Ալեքսանդրապոլում: Այնուհետև բազմաթիվ քաղաքներում և գյուղերում բեմադրվում է

վերոհիշյալ ոպերան, վորն ամեն տեղ խոշոր հաջողութուն է գտնում:

Կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանն ակտիվ կերպով մասնակցել է մեր յերաժըրտական հասարակական կյանքին: Նա յեղել է Թբիլիսիի հայոց Յերաժըտական Ընկերության Վարչության անդամ (մինչև հեղափոխութունը), Հայ Յերաժըտության Աշխատավորների Միության Վարչության, իսկ հետո Հայկական Յերաժըտության Սեկտորի անդամ, իսկ Վերջին տարիները նույն այդ սեկտորի նախագահ: Նա գրել է մի շարք հողվածներ՝ նվիրված մեր յերաժըտական կուլտուրայի խնդիրներին:

Պորհրդային Հայաստանի կառավարութունը բարձր գնահատելով Արմեն Տիգրանյանի կատարած գործը, 1935 թ. նրան շնորհեց Արվեստի վաստակավոր գործչի կոչում:

Ա Ն Ո Ւ Թ

ՈՒՅԵՐԱ Հ Ի Ն Գ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ ՅԵՎ ՅՈԹ ՊԱՏԿԵՐՈՎ

ՈՐԿԵՍԵՐՈՎԿԱՅԻ ԿՈՏՈՒՆՏԱՆԵՍ
Ս. ՇԱԹԻՐԵՍԱՆ

(Առաջին քննագրութիւնը 1912 թ. Ալեքսանդրապոլում)

Մեր յերաժշտութիան պատմութեան մեջ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը հանրածանոթ է, հատկապես իբրև «Անուշ» ոպերայի հեղինակ: Այս յերկը խոշոր ժողովրդականութեամբ յուր տվեց նրան:

Մինչև հիմա չէլ այն կարծիքը կա, թե «Անուշ»-ի յերաժշտութիւնը մի ամբողջութիւն է ժողովրդական յերգերի: Մակայն սա սխալ տեսակետ է. «Անուշ»-ի վողջ յերաժշտութիւնը, բացի յերկու յեղանակից, Արմեն Տիգրանյանի սեփական ստեղծագործութիւնն է, ուր հեղինակն

աշխատել է պահպանել հայ ժողովրդական յերգի վոճն ու Ֆոլկլոյորը:

Կոմպոզիտորն իր ստեղծագործական թափը հանդես է բերել վոկալ արվեստում: Յերաժշտական բազմաթիվ նախագասութիւնների մեջ նա թափել է վառ ու ջերմ գույներ: Այդ յերգերը լի յեն հուզականութեամբ ու անմիջականութեամբ:

Իր պարզութեան հետ միասին «Անուշ» ոպերայի լիբրեթական յեղանակները հարուստ են եմոցիաներով:

Արմեն Տիգրանյանի գործը նաև նրանով է նշանակալից, վոր նա հիմնադիրներից մեկն յեղով մեր ինքնուրույն ոպերաների ստեղծմանը:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Ա Շ Ո Ի Շ.—Գյուղացի աղջիկ. (լիբիկ
—կոլորատուր սոպրանո)

Ս Ա Ր Ո.—Յերիտասարդ հովիվ, չքա-
վոր, սիրահարված Անուշին (լի-
բիկ—գրամատիկ տենոր)

Մ Ո Ս Ի.—Անուշի չեղբայրը. յերիտա-
սարդ հովիվ. ունեոր (գրամա-
տիկ—բարիտոն)

ԱՆՈՒՇԻ ՄԱՅՐԸ.—50 տարին անց
(մեցցո սոպրանո)

Ք Յ Ո Խ Վ Ա.—50 տարին անց (բաս)

ԶՎԱՐՃԱԽՈՍ ՈՀԱՆ.—40 տարեկան,
չքավոր գյուղացի (բարիտոն)

ՊԱՀԱՊԱՆ ԾԵՐՈՒՆԻ.—(բաս)

ԱՆՅՎՈՐ

Բազմաթիվ գեղջկուհիներ և գյուղացի-
ներ:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Ոպերան սկսվում է նախերգանքով:
Խումբը յերգում է փերիների յերգը:

Առավոտ է: Սիրահարված Սարոն լեռ-
ներում իր սերն է յերգում:

Անուշը լսելով Սարոյի յերգը, դիմում
է մորը.

Մայրը հանդիմանում է աղջկան.

Սարոյի յերգի քաղցր հնչյունները
Անուշին հանձնում են խորը մտորումների:

Հեռվից լսվում է աղբյուր դնացող աղ-
ջիկների յերգը: Անուշը վերցնում է կուժը
և հետևում նրանց:

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Լեռնային բնություն: Աղջիկները կը-
ժերն ուսերին իջնում են ձորը յերգելով.

Այնուհետև աղջիկներն սկսում են պատ-

մեկ իրենց ցավերը, մանկներ են ասում,
վորի ժամանակ մի սրամիտ աղջիկ ամեն
մեկին պատասխանում է քառյակով:

Աղջիկների խումբը հեռանում է. Անու-
շը հետ է ընկնում:

Անուշը թախծոտ ու մուսյլ է:

Նորից լավում է Սարոյի յերգը: Իրիկ-
նաժամին Անուշը և Սարոն հանգիպում են
խրարու:

Յեզ յերկու սիրող հոգիներն սկսում են
լեռներում յերգել:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊՍԿԵՐ

Աղջիկներն ու տղաները հավաքվել են
ջանգլուլումի: Նրանք յերգում են:

Բոլորը միասին կիսաշրջան կազմած
նստում են վիճակ հանելու: Մի փոքրիկ
աղջիկ գլխին քող պցած, մի փոքրիկ կճու-

ճի մեջ ածում է մասնակցողներից մի-մի
իր և վիճակ ասելուց հետո, հանում է:

Մի քանի վիճակ հանելուց հետո, աղ-
ջիկներից մեկը յերգում է.

Այ թուխ մազավոր աղջիկ,

Այ սարի սովոր աղջիկ,

Զիգյարին գյուլլա դիպչի,

Քեզ ով վոր սիրի, աղջիկ:

Վիճակը դուրս է գալիս Անուշին. ընդ-
հանուր շփոթ է տիրում: Բոլորը լուռ-
թյամբ կանգնում են ու յերգում:

Ապա իրենց ընկերուհուն մխիթարում
են:

Սակայն Անուշի սիրաը կոտրվել է. նա
հավատում էր իր վիճակին..

Յերևում է Անուշի յեղբայրը: Նա կըշ-
տամբում է քրոջը և հեռանում:

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Ունեւոր գյոււաղցու տուն: Հարսանիք է: Զմուռն մի գիշեր: Գործողությունն սկսվում է խմբական պարով: Պարից հետո քյոխվան ասում է, վոր բոլորն իրենց տանը հյուերն են: Ներս են մտնում Սարոն ու Մոսին:

Սարոն չերգում է: Քյոխվան առաջարկում է, վոր յերկու ջահել իգիթները կոխ բռնեն: Նույնը առաջարկում են հանգիստականները:

Խումբը բաժանվում է յերկու մասի: Ամեն մեկը գովում է իր իգիթին:

Կովողները տաքանում են: Անուշը դուրս է գալիս հարս ու աղջիկներին միջից սրտակտուր և գունատ նայում է կովողներին: Սարոն նկատելով Անուշին, մո-

ռանում է գյուղի «աղաթը», գետնում է ընկերոջը և չոքում վրան: Մի քանի գյուղացիներ կովողներին գետնից բարձրացնում են:

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Անուշենց բակը: Մոսին դժգույն ու ցասկոտ, կանգ է առնում իրենց տան դռան մոտ:

Ներս է մտնում Անուշը և Մոսիի յերգի ժամանակ, անվստահ և ծանր քայլերով սկսում է մոտենալ ու ձեռքը դնել յեղբոր ուսին: Մոսին թեքվելով դեպի Անուշը, հանում է դաշույնը: Անուշը վախեցած չոքում է:

Անուշը յեղբորը համոզում է, վոր Սարոյին ել չի սիրի, սակայն Մոսին չի հավատում:

Մոսին վրեժխնդրությամբ լցված՝ վրձնական քայլերով հեռանում է:

Զմուռն լուսնիկ գիշեր է: Սարոն նկատելով Մոսիի հեռանալը, զգուշությամբ

մոտենում ե Անուշին: Միասին սկսում են
յերգել:

Այստեղ Սարոն և Անուշը պայամանա-
վորվում են, հենց վոր ձմեռն անցնի, քոչի
հետ միասին փախչեն լեռները.

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Լեռնային տեսարան: դիշեր ե:

Անուշը նստած ե վրանի մոտ: Խումբը
յերգում ե.

Տիրում ե խորը լռություն: Մոսին զգու-
շությամբ շուրջն ստուգելով, դուրս ե գա-
լիս վրանից: Անուշը թագնվում ե: Պահա-
պանը ձայն ե տալիս:

Մոսին ձին նստած իջնում ե գյուղը
Սարոյի խոտի դեղը այրելու համար: Զվար-
ձախոս Ոհանը հետևում ե նրան:

Սարոյի և Անուշի ժամագրված ըոպեն
հասնում ե: Ժայռերի միջից յերեվում ե

Սարոն և Անուշին ձայն ե տալիս: Նրանք
միասին փախչում են:

Մոսին վերադառնալով, զգուշությամբ
մտնում ե վրան: Նկատում ե, վոր Անուշը
չկա: Զարթեցնում ե մորը և միասին դուրս
են թռչում: Ատրձանակի ձայնից և աղ-
մուկից գյուղացիները հավաքվում են: Մի
կողմից հրդեհը, իսկ մյուս կողմից Անուշը
չկա:

Մոսին յերգվում ե գտնել նամարդ Սա-
րոյին և սպանել նրան:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Անուշի տուն վերադառնալուց հետո,
Սարոն թափառում ե սարերում ու յեր-
գում:

Մոսին սպանում ե Սարոյին:

Մարոյի սպանութիւննից հետո, Անուշը խելագար թափառում ե լեռներում ու յերգում:

Գալիս են ընկերուհիները, վորոնելով Անուշին նրանք յերգում են:

Անուշը թագնւում ե. ապա մոտենում ե նրանց՝ յերգելով:

Յերկինքն սկսում ե մթագնել. փոթորիկը մոտենում ե. ազջիկները շտապում են դեպի տուն: Սկսւում ե անձրև, ամպի գոռոց: Ապա յերկինքը պարզւում ե և իրիկնային արևն ընկնում ե կանաչ սաբերի դոշին: Անուշը յերևում ե ժայռերում և յերգում ե:

Մթնում ե: Լսվում ե Դեբետի գոռոցը:

Յեվ խելագար Անուշն իրեն հանձնում ե Դեբետի ջրերին:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՅԵՐԱԺՇՏ. Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ (արվ. վաստ գործի)

— Ա Ն Ո Ի Շ —

Ոպերա 5 գործ. 7 պատկեր, Ըրտ. 2, ԹՈՒԾԱՆՅԱՆԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

(Այբուբենական կարգով)

Գասպարբեկ Ա.

Անուշ ԳԱՆԻՆԵԼՅԱՆ Է, վաստ. արտ.

Խաչատրյան Թ.

Մելիումյան Գ.

Մկրտչյան Շ.

Անուշի ժայրը ՄՈՎՍԵՅԱՆ Ն.

Վարդանյան Ս.

Մարտ ԿԱՐԱՏՈՎ Ա., վաստ. արտ.

ՇԱՐԱՏԱԼՅԱՆ վաստ. արտ.

Մոսի ՇԱՐԱՏԱԼՅԱՆ վաստ. արտ.
Սերգոբով Ն.
Քյոխվա . . . ԱՅՎԱԶՅԱՆ Տ. վաստ. արտ.
Գրիգորյեվ Ի.
Ոհան Անդրեյեվ Ի.
Կորժենյան Ա.
Պահապան . . Ամիրբեկյան Ա.
Ալենակ Վ.

Գեղջկուհիներ և գյուղացիներ՝

Բեմադրութուն
վաստ. ութ. . . Ա. ԳՈՒՎԼԱԿՅԱՆԻ
Դիրիժյոր . . Թավրիգյան Մ.
Արտաքին ձևավոր. Մ. ԱՐՈՒՏՁՅԱՆԻ վաստ. նկարիչ
Բալետմեյտեր . . Վ. Արիստակեսյան
Խորմեյտեր . . Վ. Նիկոլսկի
Ռեժ. ոգնական Կ. Վասկանյան

Բեմի մաշինիստ և հյուսն. արհեստ. վոր. Դա-
դարյան Խ., Դերձ., արհեստ. վար. Ամիրյան Ա.,
Բուսաֆոր՝ Սաֆարյան Մ., Ռեկվիզիտ՝ Վոսյոն
Էր., Վարսավիրա՝ Ա. Մահալյոյան

«Ազգային գրադարան»



NL0302526

Գյուլիսթանի տպարան Գլավլիտ 383,
Պատվեր 674, տիրաժ 1500

4660 50 400. 677

600

782
0-57